



Կարգապահական գործ թիվ ԿԳ-17034

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 155-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/91-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՀՈՎԻԿ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող Մելանյա Առուստամյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Սարգսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հովիկ Արսենյանի (արտոնագիր թիվ 50) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

07.06.2017թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում (**այսուհետ՝ Պալատ**) մուտքագրվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (**այսուհետ՝ նաև Դատարան**) դատավոր Դ. Հարությունյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու հարցը քննարկելու մասին» 29.05.2017թ. որոշումը (**այսուհետ՝ Որոշում**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱՆԴ/0057/01/15 քրեական գործով փաստաբան Հովիկ Արսենյանը հանդիսանում է ամբաստանյալ Նորիկ Սահակյանի պաշտպանը: Փաստաբան Հովիկ Արսենյանը նշված գործով 29.05.2017 թվականի դատական նիստում առանց նախագահողի թույլտվության անզուսպ հայտարարություններ է կատարել, մասնավորապես ասել է «*հա, ես միշտ էլ անհարգալից եմ*», «*հա, մինչև դատարան չունենանք, միշտ էլ անհարգալից եմ*»:

Դատարանը նշված արտահայտությունները գնահատել է ոչ հարիր ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանի համար և գտել է, որ դրանք ոչ միայն հակասում են, այլև խախտում են փաստաբանի վարքագծի կանոնագրքի համապատասխան դրույթները, և Դատարանի նկատմամբ դրսևորված նման անհարգալից վերաբերմունքին ավելի մեղմ՝ նախազգուշացմամբ արձագանքելը չի կարող ծառայել դատական սանկցիա կիրառելու նպատակներին:

Որոշմամբ նշվել է նաև, որ էական նշանակություն չունի, թե պաշտպանը նման արտահայտությունները թույլ է տվել դատական նիստը նախագահողի

(Դատարանի) հասցեին անձամբ, թե «դատարան» բառն օգտագործել է այլ իմաստով:

Դատարանը 29.05.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու հարցը քննարկելու մասին» որոշում, որով որոշել է. «Ամբաստանյալի պաշտպան, փաստաբան Հովհիկ Արսենյանին պատասխանատվության ենթարկելու համար դիմել ՀՀ փաստաբանների պալատին:»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 03.07.2017թ. թիվ 176-Ա/ԿԳ-17034 որոշմամբ՝ փաստաբան Հովհիկ Արսենյանի (արտոնագիր թիվ 50) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագրքի**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով: Որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով փաստաբանների պալատին դիմելու մասին դատարանի սանկցիան: Կարգապահական վարույթը հարուցվել է փաստաբան Հովհիկ Արսենյանի կողմից թիվ ԵԱՆԴ/0078/01/12 քրեական գործով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու վարքագիծը ստուգելու նպատակով: Որոշմամբ արձանագրվել է, որ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Դիմողը 14.08.2017թ. ուղեկցող գրությամբ ուղարկել է թիվ ԵԱՆԴ/0057/01/15 քրեական գործով 26.05.2017թ. դատական նիստի արձանագրության կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Փաստաբանների պալատ ներկայացրած իր 14.08.2017 թվականի բացատրության մեջ Հովհիկ Արսենյանը նշել է, որ 29.05.2017 թվականին Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում նախագահող դատավոր Դավիթ Հարությունյանը, խախտելով Դատական օրենսգրքի նորմերը, սկսել է պրովոկացիոն հարցել տալ, որոնց վերաբերյալ ինքը հայտնել է իր կարծիքը, ընդ որում այդ հարց ու պատասխանները որևէ առնչություն չեն ունեցել քրեական գործի հետ: Այդ ամենը սկսվել է նրանից, որ մեղադրողն առանց թույլտվության ճառել է, իսկ երբ ինքը հակադարձել է, Դատավորն իր գործողություններում խախտում է նկատել: Ակնհայտ է, որ Դատարանը կիրառել է երկակի ստանդարտ:

3.3. Վկաների ցուցմունքները.

Կարգապահական վարույթին վկաներ չեն հրավիրվել կամ այլ կերպ մասնակցել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

29.08.2017 թվականին Նախապատրաստողի կողմից կազմվել է եզրակացություն, որի համարձայն Նախապատրաստողը գտել է, որ սույն կարգապահական գործի լուծման համար էական նշանակություն ունի այն փաստը, թե արդյոք թիվ ԵԱՆԴ/0057/01/15 քրեական գործով հրավիրված դատական նիստերին և մասնավորապես 29.05.2017թվականի դատական նիստին նշված գործով փաստաբան Հովիկ Արսենյանն անհարգալից վերաբերմունք է դրսևորել Դատարանի հանդեպ, թե ոչ, որը կարող է հանգեցնել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտմանը: Ըստ եզրակացության նշված փաստերը պետք է ապացուցվեր դիմողի կողմից: Վերը նշված փաստերը հաստատելու նպատակով դիմող՝ Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից դիմումին կցվել է թիվ ԵԱՆԴ/0057/01/15 քրեական գործով 2016 թվականի նոյեմբերի 14-ի, նոյեմբերի 7-ի, մայիսի 26-ի, հունիսի 6-ի և 2017 թվականի մայիսի 29-ի դատական նիստերի համակարգչային ձայնագրման արձանագրությունների թվով 3 կրիչները: 2016 թվականի նոյեմբերի 14-ին դատական նիստի ձայնագրության 14.24.08 մինչև 14.24.40 ժամանակահատվածում Դատարանը փաստաբան Հովիկ Արսենյանի նկատմամբ կիրառել է սանկցիա նախազգուշացում: 2016 թվականի նոյեմբերի 07-ի դատական նիստի ձայնագրության 17.11.20 մինչև 17.12.42 ժամանակահատվածում Դատարանը փաստաբան Հովիկ Արսենյանի նկատմամբ կիրառել է սանկցիա նախազգուշացում: 2016 թվականի հունիսի 06-ի դատական նիստի ձայնագրության 17.47.13 մինչև 17.47.31 ժամանակահատվածում Դատարանը փաստաբան Հովիկ Արսենյանի նկատմամբ կիրառել է սանկցիա նախազգուշացում: 2016 թվականի մայիսի 26-ի դատական նիստի ձայնագրության 13.19.14 մինչև 14.13.40 ժամանակահատվածում Դատարանը փաստաբան Հովիկ Արսենյանի նկատմամբ չի կիրառել որևէ սանկցիա:

Նախապատրաստողի կողմից ծանուցում է ուղարկվել Դատարանին, որով հայտնվել է, որ իրենց կողմից տրամադրված կրիչների 29.05.2017թվականի, 14.11.2016 թվականի, 06.06.2016 թվականի, 07.11.2016 թվականի ձայնագրություններում առկա են Դատարանի կողմից փաստաբան Հ. Արսենյանի նկատմամբ կիրառված սանկցիաները, սակայն 26.05.2016 թվականի ձայնագրության մեջ առկա չէ փաստաբան Հ. Արսենյանի նկատմամբ սանկցիա կիրառելու վերաբերյալ որևէ ձայնագրառում, ինչպես նաև դրա վերաբերյալ համառոտագրում: 29.05.2017թվականի դատական նիստի ընթացքում Հովիկ Արսենյանը դատարանում կատարել է հետևյալ արտահայտությունները՝ «*հա, ես միշտ էլ անհարգալից եմ*», «*հա, մինչև դատարան չունենանք, միշտ էլ անհարգալից եմ*»,

29.05.2017թվականի դատական նիստի ձայնագրության 16.18.50 մինչև 16.19.35 ժամանակահատվածում Դատարանը փաստաբան Հովիկ Արսենյանի

նկատմամբ կիրառել է սանկցիա:

Կրիչի վրա առկա 26.05.2016 թվականի ծայնագրառումը սկսվում է ժամը 13:19:14-ից և ավարտվում 14:13:40-ին ընդմիջմամբ: Խնդրվել է տրամադրել 26.05.2016 թվականի դատական նիստի ծայնագրառման կրիչն ամբողջական, որում առկա կլինի Դատարանի կողմից փաստաբան Հ. Արսենյանի նկատմամբ սանկցիա կիրառելու վերաբերյալ ծայնագրառումը, սակայն Դատարանի կողմից որևէ պատասխան չի ստացվել: Հետագայում Նախապատրաստողը, ստանալով դատարանից ամբողջական կրիչը, ներկայացրել է Խորհրդին:

Եզրակացության դեմ առարկություններ չեն ներկայացվել:

30.08.2017 թվականին գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5 Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱՆԴ/0057/01/15 քրեական գործով փաստաբան Հովիկ Արսենյանը հանդիսանում է ամբաստանյալ Նորիկ Սահակյանի պաշտպանը:

29.05.2017թվականի դատական նիստում առանց նախազահողի թույլտվության հայտարարություններ է կատարել, մասնավորապես ասել է «*հա, ես միշտ էլ անհարգալից եմ*», «*հա, մինչև դատարան չունենանք, միշտ էլ անհարգալից եմ*»:

29.05.2017թվականի դատական նիստի ծայնագրության 16.18.50 մինչև 16.19.35 ժամանակահատվածում դատարանը Փաստաբան Հովիկ Արսենյանի նկատմամբ կիրառել է դատական սանկցիա:

Նշված փաստերը հաստատվում են «Դատական սանկցիա կիրառելու մասին» 29.05.2017թ. որոշմամբ, Պատրաստողի բացատրությամբ, թիվ ԵԱՆԴ/0057/01/15 քրեական գործով 2017թ. մարտի 29 -ին տեղի ունեցած դատական նիստի ծայնագրառման կրիչներով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 12.10.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Հովիկ Արսենյանը փաստաբան է հանդիսանում 19.03.1999թ.-ից: Փաստաբան Հովիկ Արսենյանի նկատմամբ նախկինում հարուցված են եղել չորս կարգապահական վարույթներ, որոնցից երեքը կարճվել են՝ արտոնություն կիրառելու հիմքով, իսկ մեկով

(վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով)՝ նա ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նկատողություն (տույժը մարված է):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հովիկ Արսենյանին Կանոնագրքի 4.1 կետի պահանջները խախտելու համար պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Համաձայն Կանոնագրքի 4.1. կետի՝ Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Արտահայտվելու ազատությունը փաստաբանի մասնագիտության, փաստաբանական գործունեության անբախտելի մաս է: Անհնարին է պատկերացնել փաստաբանի կողմից արդյունավետ իրավաբանական ներկայացուցչության իրականացում դատարաններում առանց արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝ արտահայտվելու ազատությունը, պաշտպանում է ոչ միայն անձանց կողմից բարյացակամորեն ընդունվող կարծիքներ ու գաղափարներ, այլ նաև այնպիսիք, որոնք կարող են ցնցել ու անհանգստություն պատճառել, և, ընդհանուր առմամբ, ընդունվել անբարյացակամորեն: Ի հավելումն, արտահայտվելու ազատության իրավունքով պաշտպանված է ոչ միայն խոսքի բովանդակությունը, այլ նաև մատուցման եղանակը և, առավելապես երկրորդի առումով են հիմնականում առաջանում խնդիրներ արտահայտվելու ազատության թույլատրելի շրջանակների առումով: Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև հաշվի առնելով փատաբանի մասնագիտության յուրահատկությունը, փաստաբանը գտնվում է արտահայտվելու ազատության առանձնահատուկ պաշտպանության տակ:

Արտահայտվելու ազատությունը, այնուամենայնիվ, չի երաշխավորում ամբողջովին անսահմանափակ արտահայտվելու ազատություն: Այս իրավունքի իրացումը ենթադրում է «պարտավորություններ և պատասխանատվություն», որոնք կիրառելի են նաև փաստաբանների նկատմամբ: Այսպիսով, իր գործառույթներն

իրականացնելիս փաստաբանն ունի ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իր վստահորդի և դատարանի առջև: Մասնավորապես, փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխիղճ ու եռանդուն կերպով՝ օրենքի և վարքագծի նորմերի համապատասխան, այլ նաև պարտավոր է ապահովել դատարանի հեղինակությունը հանրության աչքում: Ինչ վերաբերում է արտահայտվելու ազատությանը, թեև փաստաբանները նույնպես իրավունք ունեն հանրորեն արտահայտվել արդարադատության իրականացման մասին, նրանց կողմից քննադատության արտահայտումը, այդուհանդերձ, չպետք է անցնի որոշակի սահմաններ: Ավելին, փաստաբանի արտահայտվելու ազատությունը դատարանի դահլիճում անսահմանափակ չէ և որոշակի շահեր, ինչպես օրինակ դատական իշխանության հեղինակությունը, բավականաչափ կարևորություն է ներկայացնում, որ այդ հիմքով փաստաբանի արտահայտվելու ազատությունը սահմանափակվի (*Կուպրիյանուն ընդդեմ Կիպրոսի*, թիվ 73797/01, ՄԻԵԴ, § 174): «Դատարանի հեղինակություն» հասկացությունը ներառում է, մասնավորապես, մի սկզբունք, ըստ որի դատարանները հանդիսանում են, և որպես այդպիսին մեծամասամբ ընկալվում են հանրության կողմից, որպես մի ֆորում, որտեղ լուծվում են վեճեր, իսկ քրեական մեղադրանքի դեպքում՝ որոշվում է անձի մեղավորության կամ անմեղության մասին հարցը: Հետևաբար, դատարանի հեղինակությունը պաշտպանելու առումով վճռորոշ նշանակություն է ձեռք բերում դատարանի նկատմամբ վստահությունը, որով ժողովրդավարական հասարակարգում դատարանները պետք է ոգևորեն մեղադրյալին, եթե խոսքը վերաբերում է քրեական դատավարությանը, ինչպես նաև լայն հասարակությանը (*Կուպրիյանու*, § 172): Հենց միջազգային իրավունքի այս սկզբունքն է պատճառը, ըստ որի, ինչպես արդեն նշվեց վերևում, փաստաբանը կրում է լրացուցիչ պարտականություն՝ ապահովելու դատարանի հեղինակությունը հասարակության աչքում:

Դատարանի առջև փաստաբանի վարքագծի վերաբերյալ սկզբունքներն ամրագրված են նաև Փաստաբանի գործունեության իրականացման ազատության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 25.10.2000թ. № Rec(2000)21 հանձնարարականում, մասնավորապես երրորդ սկզբունքի 4-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանը պետք է հարգի դատական իշխանությունը և դատարանի առջև իր պարտականություններն իրականացնի այնպես, որպեսզի համապատասխանի ազգային իրավական և այլ կանոններին և մասնագիտական չափորոշիչներին:*

Հաշվի առնելով վերը նշված սկզբունքները, որոնք արտահայտված են մարդու իրավունքների միջազգային նորմերում, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հովիկ Արսենյանը դուրս է եկել դատարանի դահլիճում արտահայտվելու ազատության թույլատրելի շրջանակներից՝ հնչեցնելով **«հա, ես միշտ էլ անհարգալից եմ»**, **«հա, մինչև դատարան չունենանք, միշտ էլ անհարգալից եմ»** արտահայտությունները, դրանով իսկ խախտելով Կանոնագրքի 4.1 կետի պահանջը: Փաստաբանը պարտավոր է հարգանքով վերաբերվել դատարանին: Քրեական դատավարության հոռետրաբանությունը թույլ է տալիս նույնիսկ կոշտ և սուր արտահայտությունները դատարանի դահլիճում ձևակերպել ու հնչեցնել այնպես, որ չնսեմացվի դատավարության մասնակիցների պատիվը, արժանապատվությունը: Մասնավորապես, փաստաբանը կարող է համարձակորեն

չհամաձայնվել դատավորի գործողությունների կամ դիրքորոշման հետ, հայտնել իր անհամաձայնությունը:

Վերոգրյալը հիմք ընդունելով, Խորհուրդը գնում է, որ փաստաբանը չարաշահել է արտահայտվելու իր ազատության իրավունքը և արդյունքում անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի հանդեպ, դրանով իսկ խախտելով Կանոնագրքի 4.1 կետի պահանջը:

Խորհուրդն արձանագրում է, որ դատական սանկցիայի առիթով հարուցված սույն կարգապահական վարույթի շրջանակներում՝ քննարկվել են միայն այն արտահայտությունները, որոնք հնչեցվել են Պատասխանողի կողմից դատական նիստի ընթացքում՝ Պատասխանողի նկատմամբ դատարանի կողմից նախազգուշացում կիրառելուց հետո մինչև դատարանի կողմից Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու նպատակով խորհրդակցական սենյակ հեռանալու ժամանակահատվածը:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Պալատի խորհուրդը, հաշվի առնելով Հովիկ Արսենյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ Հովիկ Արսենյանի նկատմամբ պետք է կիրառել նկատողություն տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, պահանջներով, Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. Փաստաբան Հովիկ Արսենյանին (արտոնագիր թիվ 50) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1 կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Հովիկ Արսենյանի (արտոնագիր թիվ 50) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն սրանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Մելանյա Առուստամյան